

318ա. Որ ետ կարողութի. անարհեստ եւ անիմաստ տկարութեա. իմում հասանել գծազրութեբ. ի վերջ ածատունկ եւ ածախաւս եւ նորարողոյ եւ ածատես աւետարանիս, որ է սա աւետաւոր արդարոց եւ մեղաւորաց եւ կոչակի ի յառազատ արդարադատ դատաւորին Այ:

Արդ զրեցաւ այս ածանկար բուրաստանս ի թվալանութեա հայոց. ԶԻԴ./

318բ. ի զանութե. Հասան Բեկին, թողինն Պայընտրոյ ի յաթոռակալութե. Վաղարշապատու տր. Սարգիս կթղկի. եւ մերում նահանգի եպսոսթեն. տր. Յոհաննիս, որ է ի դուռն սբ. Գեղարզեանն, ի յերկիրս Վայի ձորոյ, ի գեօղս, որ կոչի Սրկղունս, ընդ հովանեաւ սբ Գէորգի եւ սբ Յակոբի եւ այլ սրբութե, որ աստ կան: Ի իշխանութե պրն Զուսին եւ որդոցն իւրոց: //

318բ. Առ ոտս արիաջան եւ սրբահաճոյ Աւագտէր վարդապի., հաւրեղբորս մերոյ, որ է ի յանապատն Բոլորածորոյ, ի դուռն սբ Ածածինն եւ սբ Կարապոտին, որ վերստին նորոգեաց շինութբ եւ պայծառութբ. ժամատեղաց: * Եւ այլ մարմնաւոր եղբարցս իմ տր. Զաքարի եւ տր. Արբահամի նկարողի աւետարանիս, կուսակրան արեղայից եւ ընկերակցի իմոյ տր. Զեկիէլ գեղու երիցի եւ տր. Սիս. փեսոյ իմոյ:

Զեռնագրեցաւ սա իմոյ տկարութեա. Դաւիթ երիցի, որ եմ յետնեալս ամենայնի, որ չեմ արժան եմ (s!) ի կարգի, որ ըզանունս չարժէի, որ երիցուկ ես կոչէի, որ յոյժ պղերգ եմ ի բարի, արագաթիւր եմ ի չարի, պիթ (պիտի) միայն տրն ինձ ողորմի, ի յահեղ աւրն իւր յատենի, որ ի յաթոռն սբ բազմի եւ բաժանէ զազգս ամենի եւ նմա փառք յաւիտենի: /

319բ. Արդ ստացեալ զաւետարանս բարեմխտ այրն Բարկուշատեցի Շահրամիր եւ Աւղուլ մայրն, որ ստացաւ զաւետարանս յիշատակ իւր եւ հանգուցեալ որդոցն իւրոց Շահրիարին եւ Մաթէոսին եւ կենդանի որդոյն իւրոյ Շահրիմանին եւ քերցն Սիրամարգին, Շահանդըխտին եւ Մելիքին եւ Թաղուհին ամէն: Արդ ես Աւղուլս որ զաւետարանս ստացայ ի հալալ ընչից իմոց. կատարման ամ. ննջեցելոց իմոց ամէն:

Դարձեալ աղաչեմ զհանդիպողքդ այսմ տառի, զի յիշեսլիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերոյգրեալքս ի ամա եւ զիս զանարժան գրիչս զԴԹ երէց եւ զծնողս իմ, զհայրն իմ զՏր տր եւ զմայրն իմ զԳոնցայ հանգուցեալ առ Քս յոյսն ամենեցուն եւ զհարազատ որդիքս իմ զԱլէքսանոս եւ զՅոհանն եւ զմայր սոցա, զի բազում աշխատուր: /

319բ. սպասաւորէ մեզ: Եւ սխալանաց եւ խոշորութե. գրոյս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր: Եւ որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս (s!) առհասարակ ողորմեսցի եւ նմա փառք յաւիտենի ամէն:

* Հատուած տես Սմբատեան. Երեւակ. 176:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 7.

Ա. Գիրք 39. Բ. Գիրք 130.

Փառք... եւն.:

Արդ զրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Դաւիթ քահանայի ի գիւղս, որ կոչի Սրկղունս, ընդ հովանեաւ սուրբ Գէորգի եւ սուրբ նշանացս, առ ոտս քրտնաջան արի եւ քաջ Աւագտէր վարդապետի հօրեղբորս մերոյ, եւ իմ եղբարցս տէր Զաքարիայ արեղային եւ տէր Արբահամ նկարողին, ի թուականութիւն հայոց ԶԼԶ. (1487) ի յընտիր օրինակէ. ի հայրապետութեան տէր Սարգսի յաթոռն սուրբ Էջմիածնի. եւ ի զանութիւն Յաղուլ շահին, որդւոյ Հասան շահի, ի դուռն եւ ի նեղ ժամանակի, զոր նեղիմք...:

* Փիրզալէմեանի ժողովածու յիշատակարանների. 1487 թ. ԶԼԶ. թիւ 253. մի շարականէ. 1876 Մայիս 17 ի Լոնտոն քանգարան:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 8.

Ա. Գիրք 39.

Երեւանի Թանգարան No. 137.

Աւետարան, թուղթ հասարակ, բոլորգիր, հասարակ նկարներով զարդարուած, սկզբում, բայց նիւթի կողմից հետաքրքրական, մի քանիսը աշխարհի ստեղծագործութեան հետ կապուած:

Յովհանու վերջում, յիշատակարանի վերջին թերթի գիր ու թանաքը տարբեր, թէեւ ամբողջութիւն է երկուսը միասին, հաւանօրէն երկրորդ ստացողի ժամանակ նորոգուած այդ մասը եւ աւելացրած երկրորդ ստացողի գնումն էլ:

* * *

Շնորհիւ տն. ամենակալի, նորին աւանականութեամբ աւարտեցաւ եռահարչ եւ հոգիազարդ սբ աւետարանս*//, զոր էր չաղկապեալ աւետարանչացն ըստ բազմերանք գունոց ի մի ոստայն տընկելով հանճար, զոր արուեստակեալ անուշահոտ ծաղկանց եւղ եփեցական կազմութբ. որ ըստ հոգւոյն յատկութբ/ իմանի զանազան: Առ ի յեկեղեցւոյ յարմարումն յաւղիլ (?) խաղաղութբ. զըլխոյն պատշաճեալ, զի յայսմանէ կատարելութիւն:

Գրեցաւ սբ աւետարանս ի թվին հայոց. Ռ. հանասուն (s! եօթանասուն), ի յերկիրս Վայոցձոր (s!), ի գեաւղս որ կոչի Սրկղունս, ի դուռն սբ. Գէորգայ եւ այլ սրոց, որ աստ կան հաւաքեալ, ի կաթողիկոսութե. սբ. Էջմիածնա տէր Մելքի. եւ առաջնորդ տեղուս Յմնս. եպսի. ամ:

* Այստեղից յիշատակարանի գիրը տարբեր է: